



ՍԱՀԱԿ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱՐՊՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿՈՅ, Հայցէ յԱմենակա- լէն Աստուծոյ խաղաղութիւն, սէր եւ շնորհիք Հարազատացոյ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, բարեպաշտ ամուլիցոյ Սիմոնի եւ Մաթիլտի Գայրգնեան:

Չեզ է որ կ'ուղղենք ներկայ հայրապետական օրհնութեան կոնդակս, Չեզ՝ որ մեր ծե-
րութեան վերջին օրերուն մեր ուրախութիւնն եւ մեր միաբարութիւնն եղաք, Դուք՝ ներշնչուած
Աստուծով Չեք օրհնեալ գործով, ոգեւորեցիք զմեզ եւ տուն տուիք մեզ անգամ մըն ալ մեր կեր-
կեր եւ կիսահագագ ձայնով օրհնել զԱմենակալն Աստուած ասելով «Փառք Քեզ, Աստուած,
փառք Քեզ, յաղագս ամենայնի Տէր, փառք Քեզ»: Այո՛ Որդեակք մեր սիրելիք, փառքը կը վա-
յելէ Աստուծոյ, բայց կան պարագաներ որ աստուծային փառքի շնորհքն կը փալփին նաեւ
բարեսիրտ եւ բարեգործ անձերու վրայ եւ Դուք, սիրելի որդեակք մեր, Սիմոն եւ Մաթիլտ, Չեք
վրայ կը ցոլացնէք այդ փառքի նաեմանքներն Չեք յաւէտ յիշատակելի սուրբ գործով: Դուք, եր-
եկոյնեանց զուլիս գլխի տուած, միասիրտ եւ միահոգի խոկացիք, խորհեցաք եւ յղացաք սխա-
լելի խորհուրդ մը, *պարզեւել* Չեք իննսունամեայ ալեգարդ Կաթողիկոսին Տուն մը, Տուն մը
Լիբանանի ստորոք, Անթիլիասի ծովափին վրայ, Տուն մը իբրեւ օրեւան տեւական եւ մշտնջե-
նական, Կաթողիկոսութեանն Մեծի Տանն Կիլիկիոյ:

Այս իշխանական նուիրատւութիւնը Դուք ըրիք մեզի բոլորովին ինքնաբերաբար, ա-
ռանց արտաքին միջամտութեան կամ խնդրանքի, այնպիսի ասեմ մը երբ մեր կացութիւնը լու-
սահասական կը դառնար, կալուածը կամ գնելու եւ կամ նիւր իսկ Ֆաունտէյնի վերադարձը-
նելու պայմանաժամը կը լրանար եւ դուրսէն կարեւոր օգնութիւն մը կ'ուսանար, իսկ մեր
բարեպաշտ ժողովուրդին կողմէ ամէն տեղ հանգանակուած գումարները, այնքան արաքուխ,
բայց հազիւ մէկ վեցերորդը կը կազմէին պահանջուած գումարին:

Դուք ծածկանուցով մօտեցաք մեզ, ծածկանուցով Չեք դիտարարութիւնն եւ բարի նպա-
սակն պարզեցիք, ամառնալ եւ ամառմուկ 4,000 անգլ. ոսկիի շնորհով մը ինքզինքնիդ յայտնեցիք
մեզ, Անթիլիասի կալուածն հողով եւ շէնքերով գնեցիք եւ մեզ նուիրեցիք, Ազգին նուիրեցիք:
Բայց մենք ի՞նչ կրնանք չալ Չեզ, Չեք յաւէտ խնկելի եւ գովելի գործի փոխարէն, գործ մը որ
յընթացս դարեւու միշտ օրհնութեամբ պիտի յիշուի, գործ մը, որ Չեք փառքն եւ երջանկութիւնն
պիտի կազմէ, գործ մը որ հայ՝ զոյգ մը արժանաւոր զաւակներուդ զոհողութեան ոգին պիտի
ցոլացնէ եւ Չեք երկուքին փառապսակն պիտի հիւսէ. այո՛, Չեք երկոցունց միացեալ նկարն
գեցեղեցիք Կաթողիկոսարանիս հիւրասրահին մէջ, Չեք զոյգ անուններն կարգադրեցիք ար-
ձանագրել Կաթողիկոսարանիս աւագ դրան վրայ եւ սահմանեցիք որ՝ տարեկան երկուս՝ յաւուր
Ծննդեան Յիսուսի, յաւուր Յարութեան Փրկչին եւ ի տօնի մատակարար ի վիրապն՝ հանուրց Հա-
յաստանեայց Լուսաւորչին Գրիգորի, որ օր է տօնախմբութեան Կաթողիկոսարանիս, մասնուց-
ուին Ս. Պատարագներ ի յիշատակ Չեք եւ ի փրկութիւնն հոգոց ձերոց, սակայն եւ այնպէս մենք
պիտի աղօթենք եւ պիտի հայցենք Աստուծով, որ՝ երբ օր մը ներկայանաք Ամենակալին, բող ըն-
դունի զձեզ իր արհայութեան օրեւաններուն մէջ եւ ձեր անուններն արձանագրուին կենաց
Դպրութեան մէջ եւ Դուք յիշեալ լիջիք առաջի անմահ Գառին Աստուծոյ:

«Որդեակք իմ, փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ», եւ այդ փոքր ժամանակամիջոցի ամ-
բողջ տեղողութեանը մինչեւ կոչմանս վայրկեանը զձեզ պիտի յիշեմ, ձեզ համար պիտի աղօթեմ
նուիրելով ձեզ հայրապետական եւ հայրական արաքուխ օրհնութիւնս:

Աղօթարար

Տուալ Կոնդակս օրհնութեան
ի Հայրապետանոցիս Անթիլիասի
ի 66 Մայիսի 1937 ամի
եւ ի տոմարական բուականին ՌՅՁԷ
ի Հայրապետութեան մերում 34րդ ամի
Համար 117